ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 15.08.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/25

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի 31.07.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/25 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 31.07.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ մասնակցել է «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից 14.07.2017թ. հայտարարված «ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին:

Ընկերությունը հայտնել է նաև, որ Պայմանագրի կատարման ապահովումը և նրան կից ներկայացվող վճարման պահանջագիրը Ընկերության կողմից «armeps» էլեկտրոնային համակարգ է ներբեռնվել հայտի նախապատրաստման գործիքի միջոցով՝ մեկ ֆայլի տեսքով:

«ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.07.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից «armeps» էլեկտրոնային համակարգի միջոցով որպես հայտի ապահովում ներկայացված վճարման պահանջագիրը կազմված է հրավերին կից

«Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» պահանջներին անհամապատասխան, մասնավորապես՝ նշված լրացման կարգի 18 ա կետի համաձայն՝ վճարման պահանջագիրը պետք է պարտադիր ստորագրված լինի վճարողի կողմից և պարտադիր չէ եթե առկա է պայմանագիր վճարողի և ֆինանսական կազմակերպության միջև, որը չի ներկայացվել հայտով: Հիմք ընդունելով հրավերի 1-ին մասի 8.2 կետը՝ հանձնաժողովը մերժել է «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ որի համաձայն՝ եթե հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին, հանձնաժողովը «ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել է չկայացած, սակայն հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն չի հրապարակել հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորումը, փոխարենը հրապարակել է «ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/2» ծածկագրով նոր հրավեր, որը նույնպես անհասկանալի պատճառներով չեղարկել է և 28.07.2017թ. հայտարարել է «ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/3» ծածկագրով նոր հրավեր, փոփոխելով գնումների պլանով նախատեսված գնման առարկայի նախահաշվային գինը, մասնավորապես՝ նվազեցնելով այն:

«ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1-ին մասի 8.9 կետի համաձայն՝ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Ուստի, քանի որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ և հայտում ներառվող՝ իր կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատվել են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա փաստաթուղթը որով ներկայացվել է վճարման պահանջագիրը նույնպես հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Այսպիսով, «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից «armeps» էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերով նախատեսված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ որպես հայտի ապահովում ներկայացված տուժանքի մասին համաձայնագիրը և նրան կից վճարման պահանջագիրը կազմվել են հրավերին կից «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և

լրացման կարգի» պահանջներին համապատասխան և հաստատվել է /ստորագրվել է/ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընկերության կողմից ներկայացված բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները հետևյալն են՝

Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթները՝ հետևյալ հիմնավորվածությամբ.

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանքի ձևով: «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով ներկայացրել է միակողմանի հաստատված հայտարարություն տուժանքի ձևով և կից վճարման պահանջագիրը՝ հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ն գտնում է, որ Պատվիրատուն խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը, քանի որ անհիմն մերժել է «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Ընկերությունը, Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝

1. Կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու և «ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/2» ծածկագրով, այնուհետև «ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման միջոցով նոր ընթացակարգ հայտարարելու մասին որոշումները:

2. Դադարեցնել «ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովի կողմից կայացված թիվ 2 արձանագրությունը:

3. Դադարեցնել «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան»-ի գնումների պլանով նախատեսված «ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի գնման առարկայի՝ «Լուսանկարչական և օժանդակ ծառայությունների» նախահաշվային գնի փոփոխությունը և նախահաշվային գին համարել «ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-

17/1» ծածկագրով ընթացակարգի հայտարարության հրապարակման ժամանակ առկա նախահաշվային գինը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 04.08.2017թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է 31.07.2017թ. բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

2. «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը 04.08.2017թ. թիվ 22/08.1.6-787 գրությամբ Խորհրդին է ներկայացրել «ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցմանը վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի հայտը մերժվել է ՀՀ գնումների օրենսդրության պահանջների համաձայն՝ քանի որ վերջինիս կողմից որպես հայտի ապահովում ներկայացված վճարման պահանջագրի վրա բացակայում է հրավերով պահանջվող էլեկտրոնային ստորագրությունը, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 04.08.2017թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է 04.08.2017թ. թիվ 22/08.1.6-787 գրությամբ Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2017/25 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2017/25 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կարիքների համար՝ «Լուսանկարչական և օժանդակ ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «armeps.am» էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ է ներկայացրել «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.18 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

3. «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովումը՝ տուժանքի մասին համաձայնագիրը, և կից վճարման պահանջագիրը, ներկայացվել է մեկ ֆայլով՝ որտեղ միայն տուժանքի մասին համաձայնագրի վրա է առկա եղել էլեկտրոնային թվային ստորագրություն:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.07.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի «բ» ենթակետով արձանագրել է, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից «armeps.am» էլեկտրոնային համակարգի միջոցով որպես հայտի ապահովում ներկայացված վճարման պահանջագիրը կազմված է հրավերին կից «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» պահանջներին անհամապատասխան, մասնավորապես՝ նշված լրացման կարգի 18 ա կետի համաձայն՝ վճարման պահանջագիրը պետք է պարտադիր ստորագրված լինի վճարողի կողմից և պարտադիր չէ՝ եթե առկա է պայմանագիր վճարողի և ֆինանսական կազմակերպության միջև, որը չի ներկայացվել հայտով: Հիմք ընդունելով հրավերի 1-ին մասի 8.2 կետը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

5. Նույն արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին, հանձնաժողովը «ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել է չկայացած:

6. 26.07.2017թ. «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը, խնդրելով հայտնել, եթե մասնակցի կողմից հայտի ապահովումը ներկայացվել է մեկ ֆայլով և միայն տուժանքի մասին համաձայնագրի վրա է դրվել էլեկտրոնային թվային ստորագրություն արդյոք այդ հայտը ենթակա է մերժման, թե՝ ոչ:

7. Ընկերության 26.07.2017թ. գրությանն ի պատասխան՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 08.08.2017թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ամփոփելով, ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ եթե ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հայտի ապահովումը ներկայացված է մեկ ֆայլով և տուժանքի մասին համաձայնագիրը կամ վճարման պահանջագիրը պարունակող էջերից որևէ մեկի վրա առկա է փաստաթղթի վրա տեսանելի արտատպված էլեկտրոնային թվային ստորագրություն, ապա տվյալ դեպքում մասնակցի հայտը ենթակա չէ մերժման:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի 31.07.2017թ. ներկայացրած բողոքը՝ կից նյութերով, «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի 04.08.2017թ. թիվ 22/08.1.6-787 գրությունը՝ կից փաստաթղթերով և ՀՀ ֆինանսների նախարարության 08.08.2017թ. գրությունը, հայտնում է հետևյալը.

«Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 06 ապրիլի 2017 թվականի 386-Ն թիվ որոշման 4-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների կատարման ուղեցույցը հաստատում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում ***ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ***, իսկ ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:*** Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.18 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Այսպես, «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կարիքների համար՝ «Լուսանկարչական և օժանդակ ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «armeps.am» էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ է ներկայացրել «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն:

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացվող Հավելված 9-ը՝ տուժանքի մասին համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը, ներկայացվել է մեկ ֆայլով՝ որտեղ միայն տուժանքի մասին համաձայնագրի վրա է առկա եղել էլեկտրոնային թվային ստորագրություն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.07.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի «բ» ենթակետով արձանագրել է, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից «armeps.am» էլեկտրոնային համակարգի միջոցով որպես հայտի ապահովում ներկայացված վճարման պահանջագիրը կազմված է հրավերին կից «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» պահանջներին անհամապատասխան, մասնավորապես՝ նշված լրացման կարգի 18 ա կետի համաձայն՝ վճարման պահանջագիրը պետք է պարտադիր ստորագրված լինի վճարողի կողմից և պարտադիր չէ՝ եթե առկա է պայմանագիր վճարողի և ֆինանսական կազմակերպության միջև, որը չի ներկայացվել հայտով: Հիմք ընդունելով հրավերի 1-ին մասի 8.2 կետը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Նույն արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին, հանձնաժողովը «ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել է չկայացած:

26.07.2017թ. «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը, խնդրելով հայտնել, եթե մասնակցի կողմից հայտի ապահովումը ներկայացվել է մեկ ֆայլով և միայն տուժանքի մասին համաձայնագրի վրա է դրվել էլեկտրոնային թվային ստորագրություն արդյոք այդ հայտը ենթակա է մերժման, թե՝ ոչ:

Ընկերության 26.07.2017թ. գրությանն ի պատասխան՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 08.08.2017թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ եթե ***ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հայտի ապահովումը ներկայացված է մեկ ֆայլով և տուժանքի մասին համաձայնագիրը կամ վճարման պահանջագիրը պարունակող էջերից որևէ մեկի վրա առկա է փաստաթղթի վրա տեսանելի արտատպված էլեկտրոնային թվային ստորագրություն, ապա տվյալ դեպքում մասնակցի հայտը ենթակա չէ մերժման:***

Ելնելով վերոգրյալից, Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հայտերի բացման նիստում մերժելով «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի հայտը՝ գործել է ոչ իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից 31.07.2017թ. ներկայացված բողոքը բավարարել՝

1. Դադարեցնել «ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2. Դադարեցնել «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի գնումների պլանով նախատեսված «ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի գնման առարկայի՝ «Լուսանկարչական և օժանդակ ծառայությունների» նախահաշվային գնի փոփոխությունը և նախահաշվային գին համարել «ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի հայտարարության հրապարակման ժամանակ առկա նախահաշվային գինը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ